

Հայաստանի հերթեց Արարչականի այն պնդումները, թե Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ կան աւելի քան 8 հազար պարզապէս գերիներ: Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար ԿՕՐ. Մանուէլ Գրիգորեան լրագրողներու լայնեց, թէ այդ յայտարարութիւնները ոչ մէկ կապ ունին իրականութեան հետ: Ան նշեց, որ Երեւան բազմիցս յայտնած է պարզապէս կողմին, որ այդ պնդումները չեն համապատասխաներ իրականութեան: Գրիգորեան դիտել տուաւ, որ Հայաստան իր կարգին Արարչականի իշխանութիւններուն կողմէն չեն աւելցուցած քանակութիւնը, թէ քանի՞ հազար կապ Արարչականի մէջ, սակայն առայժմ պատասխան չէ ստացած: Աւելին, Պաքոյ չ'ընդունիր, որ այս հարցով պարզին միջազգային կապակերպութիւնները:

Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար վերստին հաստատած է Հայաստանի պատասխանատուութիւնը՝ քննարկելու պարզապէս կողմի որեւէ առաջարկ այս հարցին շուրջ:

ԻՃԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵ ՊԵՏԵՐՈՒՆ ՇԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԵՐՆ

ՅՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԵՅՐՈՒԹԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ ՄԻՋԻՆԱՐԵԻԵԼԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ԳԾՈՎ ՀԻՆԳ ԿԵՏԵՐԷ ԲԱՂԿԱՅԱԾ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Հանրապետութեան նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ հանդիպում մը ունեցաւ Յրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք տը Վիլֆէնի հետ, որ Շարք օր հասաւ Լիբանան, Դամասկոսի մէջ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի եւ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Յարուք Շարէի հետ հանդիպումներ ունենալիք էր:



Պապատայի մէջ կէս ժամուան հանդիպումին ընթացքին, նախագահ Լահուտ եւ Տը Վիլֆէն քննարկեցին շրջանային վերջին իրարարձութիւնները, յատկապէս Իրաքի պարզացումները, ինչպէս նաեւ պաղեստինեւիստայի տագնապին առնչուող հարցեր:

Տը Վիլֆէն նախագահ Լահուտի յայտնեց Յրանսայի կեցածքը՝ Միջին Արեւելքի պարզացումներուն նկատմամբ, շեշտելով, որ արաբեւիստայի տագնապը անպայման պէտք է լուծուի մը գտնէ:

Տը Վիլֆէն իբրեւ

լուծում ներկայացուց հինգ կէտերէ բաղկացած նոր ծրագիր մը, որ կ'ընդգրկէ խաղաղութեան ճամբով քարտէսը, անոր գծով իսրայէլեան եւ պաղեստինեան համաձայնութիւններ, որոնց կը յաջորդեն վարչական եւ բարգաւաճման օժանդակութեան քայլեր, որոնք կը դիրացընեն պաղեստինեան պետութեան մը կերտումը, եւ ապա միջազգային խորհրդաժողով մը, որ կը ճանչնայ պաղեստինեան նոր պետութիւնը:

Նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ խաղաղութեան ճամբով քարտէսը տա-

կաւին չէ հրատարակուած, որպէսզի անոր նկատմամբ կեցուածքներ որդեգրուին, «սակայն մամլոյ մէջ եւ պանապան լրատուամիջոցներով կատարուած յայտարարութիւնները եւ իսրայէլացի պատասխանատուներուն յայտարարութիւնները ցոյց կուտան, թէ Իսրայէլ կ'աշխատի այնպիսի պայմաններ պարտադրելու, որոնք պիտի մերժուին Լիբանանի կողմէ, յատկապէս պաղեստինցի գաղթականներուն տունդարձի պայմանին վերաբերեալ», ըսաւ Լահուտ:

Շարք՝ էջ 2

ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՈՒ ՓՈՐՉ ԹԻՔՐԻԹԻ ՄԷՋ ԾԱՆՐԱԿՇԻՈՒ ԲԱԽՈՒՄՆԵՐ

Իրաքի կամաւորներ եւ ոստիկաններ երկ փորձեցին հակակշիռ տակ առնել Պաղտատի մէջ տիրող անընդհատութիւնը, որ շարունակուած էր ամբողջ շաբաթավերջին: Կողմնակալ, վայրագութիւն եւ ոճիւրներ անցեալ Չորեքշաբթի օրուրն է վեր սովորական երեւոյթներ դարձած էին Միջազգային պատմական մայրաքաղաք եւ քանի մը հազար տարուան պատմութիւն ունեցող Պաղտատի մէջ: Օրերէ ի վեր պետական հաստատութիւնները, դեպատմութիւնները, վաճառատուները եւ պանդոկները թալանող ու աւերող իրաքիներ չխնայեցին մինչեւ իսկ պատմական կողմերը եւ յատկապէս՝ Պաղտատի պետական քանդակարանը, որ «բարբարոս» արարքներու թիրախ դարձաւ:

Պաղտատի բնակիչները, որոնք ուրախութեամբ ընդունած էին ամերիկացի զինուորները, պահանջեցին որ անոնք կարգ ու կանոն վերահաստատեն, այսպէս՝ պաղտատցիները ամերիկեան զինուորներուն դէմ պիտի կանգնին: Երկ առաջին անգամ ըլլալով Պաղտատի մէջ քանի մը տասնեակ իրաքիներ բողոքի հաւաք մը կատարեցին ամերիկացիներուն դէմ: Անոնք բարձրացուցած էին պատմութիւնը, որոնց վրայ «Պուշ = Սատամ» կը կարդացէր:

Մինչ այդ, ամերիկեան ուժերը կոչ ուղղեցին իրաքիներուն օգնելու կարգ ու կանոնի վերահաստատման: Հարիւրաւոր կամաւորներ ընդառաջեցին, ինչպէս նաեւ քանի մը օրէ ի վեր առաջին անգամ Պաղտատի փողոցներուն մէջ տեսնուեցան ոստիկաններ՝ իրենց ինքնաշարժներով: Ամերիկեան ուժեր երկ փութացին նաեւ ջուր եւ ելեկտրականութիւն հասցընելու հիւանդանոցներուն, որոնք եւս թալանի ենթարկուած էին: Միջազգային Կարմիր Խաչի ներկայացուցիչներ մտահոգ են հիւանդանոցներուն վիճակով:

Գոցներուն վիճակով: Անոնք կ'ըսեն, որ օժանդակութիւնները կ'ուզեն հիւանդանոցներուն հասցնել, սակայն մտահոգ են, որ անոնք անգամ մը եւս կրնան կողոպտուիլ:

Պաղտատի ոստիկանութեան խումբ մը ոստիկաններ եւ անոնց պատասխանատուները պատրաստակամութիւն յայտնեցին գործելու: Անոնք ըսին, որ կառավարութեան մը համար չէ որ կ'աշխատին, այլ՝ ժողովուրդին համար:

Հիւսիսի մէջ կացութիւնը բաւական հակակշիռ տակ առնուած է: Ամերիկեան ուժերը երկ հասան Սատամի ծննդավայր թիքրիք, ուր հարիւրաւոր զինեալ իրաքիներ յայտարարած էին, թէ պատրաստ են անձնատուր ըլլալու ամերիկեան զինուորներուն, պայմանաւ

Շարք՝ էջ 10

ՍՈՒՐԻԱ ՀԱՄԱԲԱԿԱՆ ԲԱՆԴՈՒՄԻ ՉԵՆՔԵՐ ՈՒՆԻ

Կ'ԸՍԷ ՃՈՐՃ ՊՈՒՇ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ երէկ Սպիտակ Տան մէջ թղթակիցներու յայտարարեց, թէ Սուրիա հաւաքական քանդակարարութիւններ ունի եւ աւելցուց, որ «Դամասկոսէն կը սպասենք մեզի հետ գործակցութիւն»:

Սուրիացի բարձրաստիճան պաշտօնատար մը՝ Իմատ Մուսթաֆա անմիջապէս հակադրեց յայտարարելով. «Մենք անմիջապէս պատրաստ ենք միջազգային քննիչներ ընդունելու՝ սպացուցելու համար հակառակը, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղենք Ուաշինկթընի, որ միեւնոյն աշխատանքը տանի Իսրայէլի մէջ եւս»:

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ՈՃՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆԸ ՀԱՐԻՐ ՈՒԹՍՈՒՆ ԱՍՏԻՃԱՆ ԿԸ ՓՈԽՈՒԹԻՆ ՅԱՆԿԱՐԾ, ՍԱԿԱՅՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՔ ՍԱՌՆՕՐԷՆ Կ'ԱՐՁԱԳԱՆԳԵՆ

ԵՐՈՒՍԱԶԷՄ, 13 (ԱՅՓ).- Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երէկ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ յայտնած է, թէ Իրաքի դէմ ամերիկեան գլխաւորութեամբ զինուորական արշաւը ցնցած է Միջին Արեւելքը եւ թէ պաղեստինցիներուն հետ համաձայնութեան մը առիթը կրնայ ակնկալուածէն աւելի կանխահասօրէն գալ:

«Հարեց» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը մէջ, Շարոն ըսած է, թէ շրջանէն անցած «ցնցում»էն ետք, առիթ մը կայ մարդոց ենթադրածէն աւելի արագօրէն համաձայնութիւն մը գոյացնելու:

«Կը դիմագրաւենք այն հաւանականութիւնը, թէ տարբեր ժամանակամիջոց մը պիտի սկսի հոս: Իրաքի մէջ առնուած քայլերը Միջին Արեւելքը ամբողջութեամբ ցնցեցին եւ անոնք իրենց հետ մեծ փոփոխութիւններու հաւանականութիւնը կը բերեն», ըսած է ան:

Իրաքի պատերազմին սկսումէն ի վեր, իր առաջին կարեւոր հարցազրոյցին ընթացքին, Շարոն զիտել տուած է. «Մարդ պէտք է դէպքերը իրապաշտօրէն դիտէ: Ի վերջոյ պաղեստինեան պետութիւն մը պիտի ստեղծուի: Չեմ կարծեր, թէ պէտք է ուրիշ փոփոխութիւն մը իրենց եւ անոր անդամներուն կեանքերը վարենք»:

Վարչապետը մերժած է մանրամասնութիւններ տալ ինչ կը վերաբերի գրաւեալ հողերուն մէջ հրէական բնակեցման կարգ մը վայրերու պարզումին, սակայն վերահաստատած է, թէ պատրաստ է «ցաւ պատճառող զինուորներ» կատարել:



«Գիտեմ, թէ ստիպուած պիտի ըլլանք բաժնուելու կարգ մը վայրերէ, որոնք կապ ունին մեր պատմութեան ամբողջ ընթացքին հետ: Իբրեւ հրէայ, ստիպուած կը պատճառէ ինձի», ըսած է ան:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Նաաթալ Արաֆատի բարձրաստիճան խորհրդատու Նապիլ Ապու Ռուտէյնա սառն կերպով հակադրուած է Շարոնի արտայայտութիւններուն:

«Կարելորդ այն է, թէ Շարոն պէտք է ընդունի Միջին Արեւելքի խաղաղութեան ուղեգիծը եւ սկսի գալի զործադրութեան դնել, սկսելով պաղեստինեան հողամասերէ հեռացումով», ըսած է ան, շեշտելով նաեւ, թէ պաղեստինցի պիտի մերժեն ուղեգիծին մէջ որեւէ բարեփոխում:

ԻՆՉ ԿՐՆԱՆ
ՍՊԱՍԵԼ
ՔԻՐՏԵՐՆ ՈՒ
ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԸ
ՊԱՏԵՐԱՉՄԵՆ
ԵՏՔ
ԷՁ 4

ԾԱՂԿԱՉԱՐԴԻ ԱՌԻԹՈՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆԵՑ ՀԱՉԱՐԱՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՀԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս վեհաբանի պատշաճմէն հայրական պատգամ ուղղեց մայրավանքին մէջ հաւաքուած հալաւուր հուսուածներուն, որոնք Ծաղկապարդի տունին առիթով իրենց պաւակները բերած էին մասնակից դարձնելու «Քրիստոսի Երուսաղէմ մուտքի թափօր»ին: «Այսպիսի ծովածաւալ բազմութիւն չէի տեսած այս մայրավանքին մէջ: Սա մեր ժողովուրդի հոգեւոր պարթօնքին ու հաւաքական գիտակցութեան խօսուն մէկ արտայայտութիւնն է: Մեր եկեղեցւոյ հոգեւոր արժեքները այսպէս կենդանի ու վառ պահելով՝ գրաւակար կու տաք դուք մեր ժողովուրդի յաւերժութեան», ըսաւ վեհափառ հայրապետը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պատարագը Գերշ. Տ. Նարեկ եպ. Ալեքսիան: Վեհափառ հայրապետը յատկապէս հայ մանուկներուն ուղղելով իր խօսքը, բաժնեց անոնց մանկական ուրախութիւնը եւ տունական գունագեղ պատկերներով ու Ծաղկապարդի վարդաբույսերով ներկայութիւնը Աստուծոյ Տան մէջ: Վեհափառ հայրապետը գնահատեց հայ ծնողները, որոնք իրենց պաւակները մանուկ տարիքէն Աստուծոյ ճամբուն մէջ դաստիարակելու նախաձեռնութիւնները եւ տունայնորդած են պանոս մայրավանք: Արամ Ա. կաթողիկոս ըսաւ որ Անթիլիասը Աստուծոյ տունը ըլլալուն հետ, է՛նչպէս մեր ազգի բոլոր պաւակներուն ու յատկապէս հայ նոր սերունդին տունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԿԻՆԱԲԱՐ՝
«ՓՈՒԼԻՑԸՐ» ՄՐՅԱՆԱԿԻՆ ԱՐԺԱՆԱՅԱԾ ՍԱՄԱՆՈՎ ՓԱՌԵՐԻ
«ԳԺՈՒՅԱՅԻՆ ՀԱՐՑ ՄԸ» ԽՈՐԱԳՐԵԱԼ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԳՈՐԾԸ
ԷՁ 5

ՖԻԶԸՐԸՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՍԱՅԼԷՀԻ ՄԵՋ ԵՒ ՊԱՆԿՆԻ ՀԱՐԻՐԻ ՄՕՏ

Կրօններու երկխոսութեան վատիկանի խորհուրդի նախագահ Միշել Ֆիզըրըլտ եպիսկոպոս անցեալ շաբաթավերջին այցելեց Մասիսի, ուր հանդիպում մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի հետ:

Ֆիզըրըլտ շեշտեց, որ Լիբանան տարբեր համայնքներ ընդգրկելով հանդերձ պահպանած է ներքին համերաշխութիւնը եւ պէտք է բարի օրինակ ծառայէ պանաբան երկիրներու:

Պրըրի շեշտեց, որ համաշխարհային նոր օրէնքը ո՛չ քաղաքակրթութիւնն է ոչ ալ կրօնը կը ձանձնայ:

Միւս կողմէ, երեսփոխան Պահիա Հարիրի կազմակերպեց ճաշկերոյթ մը ի պատիւ Ֆիզըրըլտի:

Ձեռնարկին ներկայ գտնուեցան նախագահ Կոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ նախարար Միշել Մուսա, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի ներկայացուցիչ երեսփոխան Ալի Օսէյրան, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, մարտնչներու ՄՖԷՅՐ պատրիարքի ներկայացուցիչ Ռոյան Ապու ժառանգ եպիսկոպոս, կաթողիկէ հայոց Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարքի ներկայացուցիչ՝ Վարդան եպ. Ազգարեան, հանրապետութեան միւլթի շէյխ Մոհամմէտ Ռաշիդ Բապպանի, շիիներու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապու Էմիլ Բապպան, ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան պաշտօնատարներ եւ այլ հոգեւոր պետեր:

ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԺՈՍՊԼԱԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱԿՑՈՂ ԲԱԶՄԱՆԴԱՍ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկէ երկուրեւն էր Բորայթմի մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար՝ երեսփոխան Ուալիտ ժոմպլաթը, որուն կ'ընկերակցէին նախարարներ՝ Մարուան Համատէ եւ Ղա-

չի Արիտի, երեսփոխաններ՝ Աբրահմ Ծրեհայէպ, Ռոհամէտ Հաժմար, Ալաէտտին Թըրրօ եւ Էլի Աուն, ինչպէս նաեւ իբրիմ Խարրուպի, Շուֆ Սուէյժի եւ Շուֆ Ալեյի քաղաքապետութեան խորհուրդի նախագահներ Ասիֆ

Շապպան, Սամիր Յարաիրի եւ Ռոժէ Աշշի:

Հանդիպումին քննարկուեցան ամբողջ Լիբանանի տարածքին աղբակոյտներու հարցը լուծելու հեռանկարները, յատկապէս Նաքմայի աղբանոցը փակելու հարցը:

ՖԻՆԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԵՅՐՈՒԹԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ...

Ան վերանայեց անց, որ Լիբանանի մերժողական կեցուածքը պաղեստինցիներու բնակեցման գծով՝ վերջնական է եւ մաս կը կազմէ իրանական սահմանադրութեան:

միջնակային օրէնքներու գործադրութեան: Անոնք մտահոգութիւն յայտնեցին Իրաքի մէջ շարունակուող անկայուն վիճակին համար: Տը Վիլիքն նախագահ Լահուտի փոխանցեց նաեւ Ս. Փեթրօպոլիսի վեհաժողովին արդիւնքները, ինչպէս նաեւ յառաջիկայ շաբաթուան ընթացքին Յուսսանի մէջ կայա-

Շարունակուած Ա. Էջէն

նախը Եւրոպական վեհաժողովին մանրամասնութիւնները, աւելցնելով, որ վեհաժողովին պիտի մասնակցին նաեւ արաբ ղեկավարներ, յայտնելով համար իրենց երկիրներուն կեցուածքները իրաքեան թղթածարին գծով:

Նախագահ Լահուտ յորդանեց Յրանսայի եւ Եւրոպական Միութեան ջանքերը՝ ՄԱԿի աշխուժ եւ անհրաժեշտ ղերակատարութիւնը վերականգնելու իմաստով:

ուպածն է, որովհետեւ պիտի ապահովէ ամերիկացիներուն երկար կեցութիւնը Պաղտատի մէջ:

Անդրադառնալով խաղաղութեան ճամբորդութեան, Պրըրի շեշտեց, որ Լիբանան չի պօրակցիր անոր, որովհետեւ ան չ'իրակայացներ պաղեստինցի ժողովուրդին փախաբերութիւնը եւ պարտադրուած է Իսրայէլի կողմէ:

Տը Վիլիքն այցելեց նաեւ Բորայթմի վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները եւ շրջան կատարած իր այցելութեան նպատակը:

քարիւղը պէտք է օգտագործուի «թափանցիկ օրէնքի» մը սկզբունքով, որպէսզի անկէ օգտուին բոլոր իրաքցիները: Ան աւելցնեց, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը անհրաժեշտ է, որ վերսկսի, վերջ տալու համար շրջանային մէջ ապրող ժողովուրդներու յուսախաբութեան:

ՄԱՍՆՈՅ ԱՍՈՒԼԻՍ

Լիբանանի մէջ իր կատարած հանդիպումներէն ետք եւ նախքան Սէնտական Արաբիա մեկնելը, Վիլիքն իրանացի իր պաշտօնակիցին՝ Համմուտի հետ Ելէրուրի միջնակային օղակայանին մէջ տուաւ մամոյն ատլիսի մը, որուն ընթացքին շեշտեց, թէ շրջան կատարած իր շրջապատող եւ Լիբանանի մէջ ունեցած բոլոր տեսակցութիւնները կ'երրոնացած են իրաքեան եւ պաղեստինեան տագնապներուն լուծումներ ապահովելու հեռանկարներուն եւ միջոցառումներուն վրայ, անհրաժեշտ նկատելով ՄԱԿի կեդրոնական դերը վերականգնելու համար զորքի իրենց աշխատիլ:

Տը Վիլիքն շեշտեց, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի վերսկսման հիմք կը ծառայէ Մատրիտի վեհաժողովը եւ աւելցնեց, թէ շրջանային կացութիւնը պանաբան մարտահրաւերներով մեղու կը թուի ըլլալ, որոնց լուծման առաջնահերթութիւնը կ'ընեն խորհրդակցութիւններուն եւ երկխոսութեան:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԻՆԵԱՆ 100ԱՄԵԱԿ
ԸԱՍԱԶՁԱՅԻՆԻ Ս. ԵՒ Շ. ԱՐԱՍԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
Կը կազմակերպէ. ի նպատակ սաներու ֆոնտին՝
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ
Կատարողութեամբ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ԱԶԱԿԵՐՏԵՐՈՒՆ
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 16 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Յակոբ Տէր Սելբոնեան թատերասրահին մէջ:
ՄԱԿ՝ 5.000 Լ.Ո.

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինը կը ստանձնէ օրուան մը ձաշի ծախսը 300 տոլարով:
Տիկին Սոսի Խաչիկեան իր ամուսնոյն՝ Նշան Խաչիկեանի մահուան առիթով:

ԶԵՂՈՒՄԵ ԳԻՆԵՐՈՎ ԶԵՂՈՒՄԵ ԳԻՆԵՐՈՎ
ՈՒՆԱԳԱՍԱՑՈՒԹԻՒՆ - ԵՐԱՊՈՏՈՅՏԵՐ
1. 21ԷՆ 24 Ապրիլ՝ Հայէպ, Տէր Զօր, Սարկիս, Հասիէ, Փայմիր, Դաճակոս միայն 85 \$:
2. 4ԷՆ 11 Մայիս՝ Հայաստան փոխան 500 \$ ի միայն 339 \$ ընդ Airbus օդանավով:
3. 5ԷՆ 6 Մայիս՝ Մար Զոհրոս - Լաքաթիա «Մաշթէ Ըլու», 9ԷՆ միայն 19 \$:
4. 24ԷՆ 26 Ապրիլ՝ Եօրպտոս - Զարէ Էլ Շէյխ 5 ատոլազի պանդոկ, 260 \$:
Արձանագրութիւն՝ ԱԵՃՏԵՆ ԹՈՒՐԿ ԸՆԹ. 01/261177-240654 - 03/233978

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ
ԿՈՉ
Նկատելով, որ Պուրձ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը արդէ սկսած է Պուրձ Համուտի «Տըրուրի» Հայ Կաթողիկէ գերեզմանատան հողաշէրտերու սեփականագործերը փոխարինել նորերով, 2004ի Յունուարի 1Է սկսեալ հին սեփականագործերը չեղեալ պիտի համարուին:
Հետեւաբար, կը հրաւիրենք այն բոլոր ազգայինները, որոնք վերոյիշեալ գերեզմանատան մէջ հողաշէրտեր ունին՝ «Վարձու կամ սեփականութիւն», մինչեւ 29 Մայիս 2003 կապ պահեն Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութեան հետ՝ յստակացնելու համար իրենց ունեցած հողաշէրտերուն կարգավիճակը:
Վերոյիշեալ պայմանաժամեց ետք, ժողովրդապետութիւնը ոչ մէկ պատասխանատուութիւն կը ստանձնէ կատարուելիք նոր դասադրումներուն գծով:
Ժողովրդապետութեան Գրասենակի ժամերն են՝ կէսօրէ առաջ ժամը 9:00-1:00, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00-6:00 Երկուշաբթիէ մինչեւ Կիցշաբթի: Հեռ. 01-261505:
Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՅԱՆԶՆԱՍՈՒՄԸ

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԿԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆԻՆ

Ազգային մը՝ 130 \$

ԲՐԻՍՏՈՍԻ ԹԱՂԱՆ ԹԱՓՈՐ
Աւագ Ուրբաթ, 18 Ապրիլ 2003ին, մեր Տիրոջ Յիսուսի Բրիստոսի չարչարանաց խաչելութեան ու թաղման Յիշատակին սրբազան արարողութիւնը պիտի կատարուի Նոր Մարաշի Ս. Զառամնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ:
Այս առթիւ յետ արարողութեան թաղման հանդիսաւոր թափօր պիտի կատարուի, մասնակցութեամբ Զահանայից դասուն, Դպրաց Դասուն եւ ժողովուրդին:
Եկեղեցական արարողութեան եւ թափօրին պիտի հանդիսապետուի քարոզ՝
ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց)

ժամերգութիւն Թափօր
Ժամը 4:30ին
Ժամը 5:15ին
Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն՝ մասնակից դառնալու թաղման արարողութեան ու զօրանալու մահով Յարութիւն կերտած Բրիստոսի խաչով:
Ս. ԶԱՐԱՆԱՅՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵՆ, ԲԱՐՉՐ. ՎԱՐԺԱՐԱՆ
Սկսած են
2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Կրթական յաջորդ տարեշրջանին համար նորեկ աշակերտներու արձանագրութիւնները սկսած են Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանին մէջ: Արձանագրութեան օրերը՝ Երկուշաբթիէ Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ ժամը 1:00, վարժարանի քարտուղարութեան մօտ: Հասցէ. Պուրձ Համուտ, Արաքս փողոց: Հեռ. 01-260504:
ՏԵՕՐԵՆՈՒԹԻՒՆ

«ԱՍՆԱՅ ԶԱՅՆԻ» ԱՅՍՕՐՈՒՆ ԱՅՅԱԿՈՒՐԵՐԸ
● ժամը 7:30
«Աւագ շաբթուան խորհրդանշանները»
● ժամը 8:45
«Աստղեր»
● ժամը 12:00
«Մարտի պահենք հայերը»
Ճահանդուխտ
● ժամը 3:00
Հարցազրոյց՝ Շիքի Անիս Ֆայտլիկի հետ. պատկերասփիւռի «Պատմութիւններ»-ու շարքէն
«Ալթահատի» իր գործին մասին.
● ժամը 6:00
«Հայ երգաշխարհ»
● ժամը 8:00
«Պատասխան եւ շաէ»

ԶՐՈՅՅԻ ՄԸ ՊՐԻՍՄԱԿԷՆ

ՈՐՈՎՀԵՏԵՒ ՄԵՐ ՄԻԱԿԹՇՆԱՄԻՆ ԹՈՒՐՔԻԱՆ Է

«Հետաքրքրական է, թէ իրաքեան այս խճանկարէն թուրքիա ինչպէս դուրս պիտի գայ: Ան Առաջին եւ Երկրորդ Աշխարհամարտերէն պրծաւ, հակառակ երբեմն գրեթէ անելի վիճակներու մատնուելուն: Հիմա տեսնենք, թէ ան այս Երրորդ Աշխարհամարտէն ինչպէ՛ս պիտի պրծի: Պէտք է ընդունիլ, որ թուրքերը դիւանագետ ղեկավարութիւն մը ունին, թէեւ ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը անքան է: Նաեւ աշխարհագրական նպաստաւոր դիրք մը ունին, որ կարելի չէ անտեսելը»:

Հայ մըն է խօսողը, ոտքի վրայ, ճամբեկրին, քանի մը հոգիներ սովորական վիճաբանութիւն-զրոյցի մը ընթացքին, որ յատուկ է միջինարեւելեան երկիրներուն, եւ նոյնիսկ եթէ անոնք յաճախ կ'աւարտին առանց բանաձեւումս երկարաժամանակեց ու կը մնան զրոյցի մը ընդ սահմաններուն մէջ միայն իրենց նախնական մակարդակով ու ոչ բարձր իմացական կարողութիւններով, այսուհանդերձ շահեկան են, քաղաքական որոշ «հասունութիւն» կ'արտայայտեն ու մանաւանդ շեքմեռանդ են եւ հաճելի, ինչպէս նաեւ տարբեր՝ ուրիշներու զրոյցներէն, որոնք յաճախ չեն անցնիր զաւար մը գարեջուրի շուրջ համախմբումս՝ պէշպարիլ անվերջ ու տափակ վէճերէն անդին...:

Վերադառնալով մեր նիւթին: Զրուցակիրներուն մէջ տեղացի մը կէս-կատակ կէս-լուրջ յարեց. «Ինչո՞ւ հայերը ա՛յսքան հայաժախտ ունին թուրքերուն դէմ: Ճիշդ է, որ անոնք մեկի ալ չ'իսխակցին, չեն սիրւիր, բայց դուք տարօրինակօրէն կ'ատէք պիւրէնք: Օրինակ, հիմա մենք Իրաքի մասին կը խօսինք, եւ՛ պարո՛ւ, դուն յանկարծ թուրքեան ուրկե՞ մէջը բերիր...»:

Հայը ծպտալով, կարճ-կտրուկ ըսաւ. որովհետեւ մեր միակ թշնամին թուրքեան է: Ապա շարունակեց, աւելցնելով. թէեւ ճիշդ չեն ըսեր, թէ իրաքեան հարցին մէջ թուրքեան ինչ գործ ունի, որովհետեւ, անկապ Հիւսիսային Իրաքի մէջ այսքան անդուլ բարձրացուցած քրտական հարցին կարեւոր մէկ գործօնն է, բայց այս մասին ըստ երեւոյթին շատ չեն հասկնար եւ են հիմա քեզի դասախօսութիւն պիտի չտան, բայց միայն մէկ բան պիտի ըսեն եւ դուն ատիկա ականջիդ լաւ օղ ըրէ:

Այո՛, մեր միակ թշնամին թուրքեան է: Մենք Միացեալ Նահանգներու մէջ աւելի քան մէկ միլիոն հայրենակիցներ ունինք եւ ինչպէս կրնանք անոր դէմ ըլլալ, երբ ան մեզի Ուիլիսներ տուած է, որուն ուղեգրի միւնչեւ օրս լրջօրէն ապին հետեւողներ կան: Մենք ինչպէս կրնանք Ռուսիոյ դէմ ըլլալ, երբ ան իբրեւ մեր «քեռի» ընդունած ենք երկար ատեն ու այդպէս է նաեւ այսօր: Մենք ինչպէս կրնանք Ֆրանսայի չ'համակրիլ, երբ ան ի հեճուկս թուրքիոյ՝ մարդկութեան հաշուոյն քաներորդ դարու մեծագոյն ամօթը ձանձցաւ իբրեւ Յեղասպանութիւն: Իսկ ինչպէս կրնանք արաբական աշխարհը չ'սիրել, երբ ան գրկաբաց ընդունեց մեզ, երբ աշխարհ ամբողջ երես կը դարձնէր մեզի, որովհետեւ տուաւ-տեղ կրսնցուցած, մեր պապեանական հողերէն բռնագաղթուած, բոպիկ-անօթի էինք...:

Երկար է շարքը՝ Ծայրագոյն Արեւելքէն մինչեւ Միջին Եւրոպայի մինչեւ Լատին Ամերիկա. աշխարհի հինգ ցամաքամասերուն չկայ մէկ հատիկ երկիր կամ ժողովուրդ, որուն դէմ ըլլանք մենք, որովհետեւ խաղաղասէր ազգ ենք:

Ինչ կը վերաբերի մեր թշնամիին, թուրքիոյ, ապա կրնանք անոր հետ ալ հաւանաբար օր մը բարի դրացիներ ըլլալ, անշուշտ եթէ ան լրացնէ բարիդրացնութեան պայմանները, այսինքն՝ երբ հրապարակաւ ընդունի իր գործադրած Յեղասպանութիւնը, հատուկէ հայ ժողովուրդին բոլոր իրաւունքները՝ բարոյական, տնտեսական թէ հողային: Սակայն այնքան ատեն որ ան կը շարունակէ ուրանալ այդ բոլորը, կը ծնայ մեր միակ թշնամին եւ մենք կը պայքարինք զորքի ի բռն, մահուան գնով, ստանալու մեր արդար իրաւունքը, զոր երբեք տանուլ չենք տար, հաւատացե՛ք: Հիմա, ըսե՛ք, իսկ հակադրութիւն ինչո՞ւ մեր միակ թշնամին թուրքեան է, մենք ինչո՞ւ այդքան մօտեւ կը հետաքրքրուինք անոր ամենէն աննշան շարժումներով իսկ: Հիմա համոզուեցա՞ր, որ հայաժախտ չէ այս մէկը, այլ՝ պարտաւորութիւն, ազգային գիտակցութիւն: Չհամարձակիք անգամ մըն ալ այդպէս կէս-կատակ «թրթիշ»ներ ընել մեզի, մանաւանդ Ապրիլ ամսուան ընթացքին...:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Աշակուբայրն էջ


ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԵՐԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐ

ՌՈՒԲԷՆ ՆԱԾԱՐԵԱՆ

Շատերու համար վերացականությունը արտայայտուելու դիւրին միջոցն է, իսկ իսկական արուեստագէտները վերացականութեան կը դիմեն անհրաժեշտաբար ընտրած ըլլալով արտայայտուելու դժուարագոյն ճանապարհը: Արուեստագէտը վերացականութեան կը դիմէ այն պարագային, երբ սպասած կ'ըլլան արտայայտման բոլոր միջոցները՝ զինք «տանջող» հոգեվիճակները դրսևորելու համար:

Մարգու զգացական ներաշխարհը, իր բազմաբնոյթ ծալքերով, բարդ է ու խորախորհուրդ: Մեզ չընկալուող շօշափելի աշխարհն ու մեր լեզուն չափազանց սկար են արտայայտելու համար այն բոլոր յուզերն ու անոնցմէ ծնող «գաղափարները», որոնք գոյութիւն ունին մարդէակի հոգեմտաւոր էութեան մէջ: Ահա թէ ինչո՞ւ գերզգայուն արուեստագէտը կը դիմէ վերացականութեան, այնպէս՝ ինչպէս երաժիշտը:

Այս վերջիններէն է նաեւ Ռուբեն Նաճարեան: Ծնած է 1951ին, Պէյրուսի: 1975ին աւարտել է ետք ALBA-ի Գեղարուեստից բարձրագոյն հիմնարկը, կը մեկնի Փարիզ, ուր կ'ընդունուի ENSAD-ի որմանկարչութեան բաժանմունքը, գործիքներէ փայտու յաջողութեամբ: 1977ին



Ինչպէս՝ Փարիզ, Լոնտոն, Մատրիս, եւ այլն...

Հոգեկան նուրբ ծալքեր բացայայտող այս օժտուած գեղանկարիչը գոյնէն ու գիծէն աւելի իր արտայայտման գրաւը կը դնէ բիծերու արտայայտչականութեան վրայ:

Ան քայլ մը առաջ կ'անցնի թէ՛ փուսերի-լիստերէն (կէտապաշտութիւն), թէ՛ քաշիստ-

նիսկ վերածուելով տապալակից վիճակներու: Այսուհանդերձ անոր որոնումները կը ձգտին բացայայտել կեանքի այն անթեղուած վիճակներն ու զգացումները, որոնք «թարգմանելի» չեն այլ արտայայտչամիջոցներով: Ռուբէնի գործերը հնչել են մեղեդիներու նման ու խորհրդաւոր Սօսեաց անտառի սոսափիւններուն նման:

Ռուբէն ունի նաեւ կիսավերացական ստեղծագործութիւններ, որոնք գոյնի օժանդակութեամբ աւելի մատչելի են ակնդիրին: Այս ընդթի անոր գործերը կը յատկանշուին անմիջականութեամբ ու գրաւչուութեամբ: Հասարակ թաս մը, ծալուած թուղթի կտոր մը եւ կամ գունաւոր լաթ մը յատուկ հնչեղութիւն կը ստանան Ռուբէնի երկերուն մէջ, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը իրրեւ առանձին կերպար ունի իր խառնուածքը ու նկարագրը: Անոնք փոխադարձ կապի եւ յարաբերութեան մէջ են իրարու հետ, որոնք տարբայնօրէն ներդաշնակուելով կը գրսեւորեն բացակայ մարդուն ներաշխարհը:

Ռուբէն ունի իւրապատուկ լեզուամտածողութիւն եւ ուրոյն արտայայտչաձեւեր, որոնք թէ՛ եւ մեծ տարածքներ չեն ընդգրկեր, սակայն կը շօշափեն համայն մարդկութիւնը յուզող խնդիր:

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ



կը ստանայ նոյն համալսարանին առաջին մրցանակը: Նոյն տարին կը մասնակցի «Սալոններ»-ու խմբային ցուցահանդէսին եւ կ'արձանանայ յատուկ ուշադրութեան: Ռուբէն անհատական ցուցահանդէսներ կազմակերպած է Եւրոպական քաղաքներու մէջ,

ԱՏԻԼ
ԱՏԵՏԻ ՇԷՆԲ. Բ. ՅԱՐԿ
ՆՈՒ. 01/242556-7

ՁԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԹԻՆ ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՎՍԱԿՏԵՅԷՔ ԱՏԻԼ - Ի


ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԴԵՐԱՍԱՆՈՒՏԻ ՄԱԿԻ ՎԱՍԻԼԵԱՆԻ ՏԵՏ

Հայրենի ծանօթ բեմադրիչ Երուանդ Ղազանջեան «Պաղտասար Աղբար»-ի բեմադրութեամբ անգամ մը եւս խանդավառեց լիբանանահայ թատրաւի հասարակութիւնը: Տրուած ըլլալով, որ ան գործի բերումով ժամանակէն առաջ մեկնեցաւ Հայաստան, նախընտրեցինք ներկայացում մասին հարցազրոյց մը ունենալ արժանաւոր դերասանուհի Մակի Վասիլեանի հետ: Ան ծնած է Պէյրուս: Նախնական կրթութիւնը ստացած է Բ.Բ.Ս.ի Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարանին մէջ, զոր աւարտած է 1975ին: Երկու տարի Սե. Ի. Թե. Ի արհեստից ուսումնարանը յաճախել էտք, կը նետուի կեանքի ասպարէզ՝ զուգահեռաբար հետաքրքրուելով թատրոնով: 1985ին կ'անդամակցի «Վահրամ Փափագեան» թատրախումբին, ուր դերասանական գործունեութեան զուգահեռ կը վարէ նաեւ վարչական պատասխանատու պաշտօններ: Ան դերեր ստանձնած է Պերճ Ֆազլեանի բեմադրութեամբ «Ագաղը», Գր. Տէյիքմեճեանի բեմադրութեամբ «Կիմեր բնու սուտ չեն խօսի», Երուանդ Ղազանջեանի բեմադրութեամբ «Մեծակութեան վերջին կանգառը», «Երեխաները կը մնան երեխաներ» եւ «Պաղտասար աղբար» ներկայացումներուն մէջ: Այս բոլորին զուգահեռ, ան պարբերաբար շուրջ քսան փոքր երգիծական ներկայացումներ իրագործած է Գրիգոր Տէյիքմեճեանի հետ:

«Ա.Ձ.Դ.Ա.Կ.»- Մեր թատրաւի հասարակութեան ծանօթ ներկայացում մը՝ «Պաղտասար աղբար»ը, ինչո՞ւ:

Մ. Վ.- Օտար հեղինակներէ ներկայացումներ իրագործել էտք, Երուանդ Ղազանջեան վարչութեան հետ համախորհուրդ որոշեց այս անգամ բեմադրել հայկական թատրերգութիւն մը: Նկատի առնելով, որ Պարոնեանը անժամանցելի է եւ նկատի առնելով նաեւ ներկայի ընդհանուր կացութիւնն ու ժողովուրդի հոգեվիճակը՝ յարմար նկատուեցաւ բեմադրել «Պաղտասար աղբար»ը:



«Ա.»- «Պաղտասար աղբար»-ի շատ բեմադրուած ըլլալը դժուարութիւններ չէ՞ր ստեղծեր...

Մ. Վ.- Անցնող Սեպտեմբերին Հայաստանի «Յակոբ Պարոնեան»-ի անուան թատրոնի հիմնադրութեան 60ամեակի առիթով Ղազանջեան արդէն իսկ բեմադրած էր «Արեւելեան ատամնաբուժ»ը եւ արժանացած՝ պետական մրցանակի: Ան նոյն ոգեւորութեամբ սկսաւ բեմադրել նաեւ «Պաղտասար աղբար»ը, որուն հաղորդեց ուրոյն շունչ եւ կերտեց պարոնեանական տարբեր կերպարներ:

«Ա.»- Իսկ համապատասխան կերպարները կային՞ ձեր խումբին մէջ:

Մ. Վ.- Նկատի առնելով, որ ան երրորդ անգամն էր, որ կ'աշխատէր այս խումբին հետ, մօտէն կը ճանչնար մեզ եւ դժուարութեան չմտածեցաւ դերաբաշխումի ատեն: Եւ լաւը այն էր, որ մեր խումբին տղաքն ու աղջիկները ունակութիւնը ունին տարբեր կերպարներ մարմնաւորելու, որուն մէջ մեծ դեր ունի ի հարկէ ինքը՝ Ղազանջեանը, իրրեւ դերուստոյց: Սակայն միաժամանակ ան խումբին հետ կը վարուի իրրեւ արհեստավարժ դերասան: Այս պատճառով բոլոր դերասաններն ալ առաւել լրջութեամբ եւ բժախնդրութեամբ կը մօտենան իրենց դերերուն:

«Ա.»- Հաւանաբար դժուարագոյն դերերը ըլլալու են, Պաղտասարը, Անուշը եւ կամ Կիպարը...

Մ. Վ.- Իրականութեան մէջ բոլոր դերերն ալ դժուար են ու պատասխանատու, առանց նկատի առնելու անոնց երկարութիւնը եւ կարճութիւնը: Այնուամենայնիւ դժուարագոյնը Պաղտասարին կերպարն էր, որ լաւապէս եւ յաջողութեամբ մարմնաւորեց Վարդան Մկրտիչեան: Նոյնը առանց համեմատութեան կարելի է ըսել բոլորին մասին: Պաղտասարը որքան ալ ինք լաւ ըլլար, եթէ խաղընկերները, նոյն մակարդակը չընտելուէին, ընդհանուր պիտի տուժէր եւ ներկայացումը իր մակարդակէն վար պիտի մնար: Փաստօրէն այս ներկայացումը իրրեւ ամբողջութեամբ գնահատուեցաւ թէ՛ մամուլին եւ թէ՛ հանդիսատեսներուն կողմէ՛ հաւասարապէս:

«Ա.»- Դուք մարմնաւորեցիք Սողոմէի կերպարը, ի՞նչ րսելիք ունիք այս մասին:



Մ. Վ.- Սպասուհիի կերպարը Պարոնեանի քով ներշնչուած կը թուի ըլլալ ֆրանսական կատակերգութիւններէն, ուր թատերախաղերուն առանցքը կը հանդիսանան սպասուհիները, այս պարագային ալ Սողոմէն, համեմատաբար իր կարճատեւ յայտնութեամբ, տիրապետել էտք տան բոլոր գաղտնիքներուն, բանալին կը հանդիսանար բոլոր թնճուկներուն: Անձամբ ես համոզուած մարմնաւորեցի այս կերպարը: Սողոմէի կերպարը կը պարտաւորեցնէ դերասանուհին՝ տարբեր առիթներով տարբեր վիճակներու մէջ մտնելու: Հոս է, որ տեղ մը կը դժուարանայ հարցը, այսինքն՝ կեղծ կացութիւնները հնարամտութեամբ իրրեւ իրականութիւն հրամցնել մէկ կողմէ՛ իր խաղընկերներուն եւ միւս կողմէ՛՝ հանդիսատեսին:

«Ա.»- Ընդհանրապէս բեմադրութեան մասին ի՞նչ կրնաք ըսել:

Մ. Վ.- Վաստակաւոր եւ տաղանդաւոր բեմադրիչ մը ներկայութեամբ, թատերախաղը կ'արժեւորուի իր մտայնացումներով եւ վառ երեւակայութեամբ, այդ մէկը անժխտելի է Ղազանջեանի աշխատանքին մէջ: Բնականաբար ան յաջողեցաւ շողկապել դերասանները գունեղ «ասեղնագործութեան» մը նման: («Ասեղնագործութիւնը» վարպետին բառն է): Այս բոլորին օժանդակեցին յարակից բաժինները, (ինչպէս՝ բեմադարագրում, երաժշտութիւն, լուսաւորում, զգեստաւորում, եւ այլն) եւ շնորհիւ այս ամբողջականութեան՝ գործը յաջողութեամբ պատկուեցաւ:

«Ա.»- Իրրեւ վերջին հարց, ստեղծագործական աշխատանքը ի՞նչպէս կ'ընթացար Ղազանջեանի հետ:

Մ. Վ.- Ղազանջեան խստապահանջ, բժախնդիր, դժուարահաճ, միշտ լաւագոյնին ձգտող արուեստագէտ է: Սակայն միաժամանակ դիւրամատչելի, հաղորդական եւ մտաւարկութիւն ներշնչող անհատականութիւն մըն է, որ հեզասակ կը դարձնէ աշխատանքը: Կ'ուզեմ աւելցնել նաեւ, որ ինչ որ կը մտադրէ, գիտէ անպայմանօրէն ի՞նչպէս իրագործել զայն: Ի հարկէ արձանագրուած յաջողութիւնները արգասիքն են նաեւ Հ. Ե. Ը. Ի ղեկավարութեան, թատերական վարչութեան, բուլխոսային աշխատողներուն, բնականաբար՝ հայ մամուլին եւ անշուշտ նաեւ՝ թատերասէր հասարակութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
«ՎԱՅՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԸԵՐԵՃԵԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆ» Ի

2003 Ապրիլին հաստատուած է «Վահրիճ Եւ Վերժին Ճերեճեան Թատրերգութեան Մրցանք»-ի յիշատակ հասարակական գործիչ եւ մտաւորական Վահրիճ Ճերեճեանի, սատարելու համար Սփիւռքի մէջ թատերական գրականութեան գարգացման:

Մասնակցութեան պայմաններն են.

ա) Մրցանքին կրճաւմասնակցի Սփիւռքահայ այն բոլոր գրողները, որոնք հայերէնով կրկնապես թատրերգութիւն մը, կամ թատրերգութիւններու փունջ մը, կը ներկայացնեն դատակազմին:

բ) Ներկայացուած թատրերգութիւնը ըլլալու է անտիպ, մեքենագրուած կամ համակարգիչի վրայ շարուած, երկու օրինակով:

գ) Մրցանակի արժանացած թատրերգութեան նիւթական պարգելը 3000 ամերիկեան տոլար է: Երկին հրատարակութեան ծախսերը կը հոգաւորուի հիմնադրամին կողմէ՛ իրրեւ «Վահրիճ Եւ Վերժին Ճերեճեան Թատրերգութեան Մրցանք»-ի մատենաշար:

դ) Երկերը հասցնելու պայմանաժամն է 30 Սեպտեմբեր 2003:

ե) Դատակազմի անդամներն են. Վերժին Ճերեճեան, Ժիրայր Դահիլեան, Տոքթ. Արմենակ Եղիայեան, Պետր Սիմոնեան, Պերճ Ֆազլեան:

ԴԱՏԱԿԱԶՄ
«ՎԱՅՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԸԵՐԵՃԵԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆ» Ի

Առաքումները կատարել հետեւեալ հասցին.
Vergine Djeredjian
P. O. Box : 510
Beirut - Lebanon

Մեզ Կը Մարտ Երազմը Մեկնեցուն

ՆԱԿԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՑՈՒԱԾՔ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌ

ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ Է, ԹԵ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍԵՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆԵՐ ԵՆ: ԹԵՒ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐ ԶԱՅԱՆՆԵՐԵԼՈՎ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԵՍԵԿԵԼ ԱՅՍ, ՍԱԿԱՅՆ ԱՆՈՆՔ ԱՂԱՏ ՇՈՒԿԱՅԻ ՕՐԵՆՔԵՆԵՐ ԿԸ ՃԱՇԱԳՈՐԾԵՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌՍԻՆ ՇԱԿԱՆԵՐԸ ԴԱՆԱԼՈՒ ՇԱՄՐ: ԱՍԵՐԻԿԱՅԻՔ ԿԸ ՁԳՏԻՆ ԱՈՒԲԵԼԱԳՈՅՆ ԵԿԱՍՈՒՏ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՍԵՓԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ: «ՏԻ ԷՐՆԱՍԻՍԱԾ» ԿԸ ՉԱՓԵ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ԵՄԲԱԼԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ամբողջ դարաններ լեցնող յայտագիրներ, որոնք արդէն պատրաստ են եւ անոնց ծախսերը վճարուած են: Այս յայտագիրները դիւրութեամբ եւ շատ աժան ձեւով կրնան գոցել որեւէ բաց՝ բրիտանական կայաններու ժամանակացոյցին մէջը»:

Այսուհանդերձ շատ դիւրին է չափազանցել նման մտաւախութիւններ: Այ՞, մեզի ծանօթ մտերիկեան ներածումներ, ինչպէս՝ «Յրէնտ» կամ «Տը Սիմսընզ» յայտագիրները կը պատկերասփռուին այնպիսի ժամերու, երբ մարդիկ սովորաբար պատկերասփռու կը դիտեն, սակայն ամերիկեան յայտագիրներուն մեծ մասը կը պատկերասփռուի այս ժամերէն դուրս եւ մեծ թիւով ակնդիրներ չի ներգրաւեր:

Պատկերասփռուի քննադատներու հաճելի կրնայ թուիլ «Տոքս Նիուզ»-ը «24» յայտագիրը, կամ՝ «Ուորըր» Պրատըրզ-ը «Տը ուէսթ ուիլինզ»ը, սակայն բրիտանական կայաններ գանոնք կը պատկերասփռեն զիջերուան ուշ ժամերուն, որովհետեւ քիչեր կը դիտեն զանոնք: Շատոնց անցած են այն ժամանակները, երբ «Տայաս»-ի եւ «Բոնաք»-ի նման յայտագիրներ կը լեցնէին պատկերասփռուի կայանի մը հիմնական ժամերը: Այսօր բրիտանական պատկերասփռուի գլխաւոր 50 յայտագիրներ տեղական պատրաստութիւններ են. առաջնակարգ տեղ կը գրաւեն տեղական սոփ օփերանները, «Բորոնէյլըն սթրիթ»-ը եւ «Իսթէնս-տըրզ»-ը:

Բրիտանիա բացառութիւն չէ: 1996-2002 մամերիկեան յայտագիրներու պատկերասփռումի ժամերը 26 առ հարիւր համեմատութեամբ անկում արձանագրած են Սպանիոյ մէջ: Վիճակագրական ուսումնասիրութիւններ կատարող «Ըսեճըլլ թելեվիզիոն սթաթիսթիքս» ընկերութեան համաձայն, համեմատութիւնը 17 առ հարիւր է Գերմանիոյ մէջ եւ 9 առ հարիւր՝ Իտալիոյ: 2000էն ի վեր համեմատութեան անկումը նկատառելի է եւրոպական մեծագոյն 5 երկիրներուն մէջ:

Տեղական յայտագիրներու համար սահմանուած պարտադիր ժամերը միակ պատճառը չեն այս փոփոխութեան: Վերջերս Եւրոպական Ցանձնաժողովը յայտարարեց, թէ Եւրոպական Միութեան իւրաքանչիւր երկրի մէջ յամբ պատկերասփռուի կայանները շատ աւելի բարձր համեմատութեամբ տեղական յայտագիրներ կը սփռեն եւ անցած են միութեան կողմէ պարտադրուած 40 առ հարիւրի համեմատութիւնը կը հասնի 62 առ հարիւրի: Ճրանայի մէջ ամէնէն աւելի ժողովրդավաճութիւն վայելող յայտագիրը Ֆրանսական ոստիկանական ժապաւէններու «Ճապիօ Մոնթալ» շարքն է: Սպանիոյ մէջ՝ սպանական «Անա ի լոս 7» սոփ օփերան: Կարճ խօսքով՝ ակնդիրներ կը նախընտրեն տեղական յայտագիրները:

Սակայն ի՞նչ կը պատահի, երբ ամերիկեան ընկերութիւն մը սեփականատէր կը դառնայ պատկերասփռուի կայանի մը: Համարկումի տրամաբանութիւնը պիտի ըսէր, թէ պատ-

րաստ յայտագիրներ բուն պիտի պարտադրուէին ակնդիրին: Եւրոպայի տարածքին միակ օրինակները պատկերասփռուի վճարովի կայաններն են, ինչպէս՝ «Տիգնի», «Էմ. Թի. Վի.» եւ «Սի. Էն. Էն.»-ը: Այսուհանդերձ իւրաքանչիւրին պարագային ամէնէն յաջող քաղաքականութիւնը «Սի. Էն. Էն.»-ի միջազգային կայանին գլխաւոր պատասխանատու Քրիս Քրէյմըրի բաւերով՝ յայտագիրներու բովանդակութիւնը «ապամերիկանացեալն» է: 1996ին «Սի. Էն. Էն.»-ի միջազգային կայանին յայտագիրներուն 70 առ հարիւր ամերիկեան էր: 2001ին համեմատութիւնը իջած էր 8 առ հարիւրի:

Այս տարբերակին ռահվիրան «Էմ. Թի. Վի.»-ն է: Անոր սեփականատէրը՝ «Վայքըմ» ընկերութիւնը սկիզբը կը կարծէր, թէ որովհետեւ փոփ երաժշտութիւնը համաշխարհային արտադրութիւն մըն է, ուրեմն անոր նուիրուած կայան մը կրնար շահ ապահովել ամէն տեղ: Սակայն անիկա շուտով անդադարուած, թէ յաջողութիւնը կախեալ էր պատկերասփռուի կայանին տեղական տարբերակներէն: 2001էն ի վեր «Էմ. Թի. Վի.» 14 նոր կայաններ հաստատած է աշխարհի տարածքին. վերջին երկուքը՝ Ռումանիոյ եւ Ինտոնեզիոյ մէջ, իր կայաններուն թիւը հասցնելով 38ի: Անոնցմէ իւրաքանչիւրը ձեւագծուած է տառացիորէն տեղական ճաշակներու յարմարելով: Իտալական «Էմ. Թի. Վի.»-ին ամէնէն աւելի ժողովրդավաճութիւն վայելող յայտագիրը «Էմ. Թի. Վի. Քիլըն»-ն է, որուն մէջ երաժշտներ կը ներկայացնեն իրենց նախասիրած խոհագիրները: Ինտոնեզիոյ մէջ «Էմ. Թի. Վի.»-ն օրական 56 անգամ կը պատկերասփռէ աղօթքի «աշխարհիկ, բայց յարգալի» հրաւեր մը: Ամերիկայի հետ իր կապին պատճառով հաւանական վնասներ նախատեսելով՝ կայանը տեւաբար քննութեան կ'ենթարկէ իր պատկերը: «Նոյնիսկ չենք ըսեր, թէ ամերիկեան բովանդակութեան պատշաճեցում մը կը կատարենք, այլ տեղական բովանդակութեամբ նոր յայտագիրներ կը ստեղծենք: Ամերիկեան բովանդակութիւնը այլեւ չ'առնչուի մեզի», կ'ըսէ «Էմ. Թի. Վի.»-ի մէկ պատասխանատուն:

Հակառակ այն մտաւախութիւններուն, թէ Մըրտոք պիտի կոխկոտէ բրիտանական պատկերասփռուի աշխարհին վրայ, իրականութեանը պիտի չ'արժանանանք: Սակայն կայանը սկսաւ շահ ապահովել միայն, երբ «Մթար» տեղացի արտադրիչներ հրաւիրեց սոփ օփերաներ, կատակերգութիւններ եւ խաղեր պատրաստելու համար հինտի եւ մանտարին լեզուներով:

Նոյնիսկ «Տիգնի», որ ամերիկեան մշակոյթի խորհրդանիշ մըն է, նմանօրինակ քաղաքականութիւն որդեգրած է: Վերջերս անիկա Սկանտինաւիոյ մէջ հաստատեց «Տիգնի» կա-

յանին տեղական մէկ տարբերակը՝ Ուիլի տը Փուհի նման «Տիգնի»-ի կերպարներ միացնելով ժողովրդականութիւն վայելող տեղական տիպարներու, ինչպէս՝ Փիփի Լոնկսթոնի: Բրիտանիոյ մէջ «Տիգնի»-ի արտադրութիւններուն կէսէն աւելին տեղական պատրաստութիւններ են: Բրիտանական սթիւտիօ մը «Տիգնի»-ի համար մանկական յատուկ յայտագիրներ կը պատրաստէ զանազան լեզուներով, «Պի. Պի. Սի.»-ի աւանդութեամբ, եւ անոնք կը պատկերասփռուին Մեքսիկայի, Գերմանիոյ եւ Ճրանսայի նման երկիրներու մէջ:

